

ԱՐԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՍՈՆԱՏ ԹԱՎՋՈՒԹԱԿԻ ՀԱՄԱՐ

Դրամա

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԻՆ

ՏՂԱՄԱՐԴ

**ԹԱՎՋՈՒԹԱԿԱՅԱՐ – երիտասարդ կին՝ կարմիր զգեստով
ԳԻԴ, ԷՔՍԿՈՒՐՍԱՆՏՆԵՐ**

Բենի վրա կախված են դատարկ շրջանակներ:

Պատի մոտ մի քանի աթոռներ են դրված:

Անկյունում թավջութակահարուհին կենտրոնացած բևեկնախեժում է աղեղը

և տեղադրում նոտաները:

Կենտրոնում Կինն ու Տղամարդն են:

Կինը ստացրիվ դիտում է «նկարները»:

Տղամարդը հետաքրքրությամբ զննում է նրան:

*Նրանց կողքով, գիդի գլխավորությամբ, աղմուկով անցնում է
էքսկուրսանտների խումբը...*

ՏՂԱՄԱՐԴ – Ներեցե՛ք, նկարչուհի՞ եք:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Արվեստագե՞տ:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Հասկանալի է՝ պարզապես սիրում եք գեղանկարչությունը:

ԿԻՆ – Այդ հարցերը Դուք բոլորի՞ն եք տալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ:

ԿԻՆ – Այդ դեպքում ե՞ս ինչու արժանացա նման ուշադրության:

ՏՂԱՄԱՐԴ – Ես Ձեզ երեք օր առաջ տեսել եմ այս սրահում:

ԿԻՆ – Հետո՞ ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Դե...

ԿԻՆ – Դուք այստե՞ղ եք աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ, ես շարքային այցելու եմ:

ԿԻՆ – *(Բավականին կտրուկ)* Լսեք, շարքային այցելո՞ւ...
Դուք ուրիշ բան ու գործ չունե՞ք:

ՏՂԱՄԱՐԴ – Ունեմ...

ԿԻՆ – Ուրեմն հաջողություն Ձեզ:

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալություն: Բայց...

ԿԻՆ – Էլ ի՞նչ բայց:

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ հասկանում ինչո՞ւ եք զայրանում:

ԿԻՆ – Ներեցե՛ք, նյարդերս են...
Այսպիսով, ի՞նչ է Ձեզ հետաքրքրում: Ա՛խ, այո, սիրու՞մ եմ արդյոք
զեղանկարչությունը: Այո՛, անչա՛փ: Դա իմ հոբբին է:

*Կինը սաստիկ լարված է, իսկ Տղամարդը ընդհակառակը՝ հանգիստ:
Ավելին, առաջին հայացքից նա թեթև ֆլիրտի է տրամադրված:*

ՏՂԱՄԱՐԴ – Հոբբի՞ն:

ԿԻՆ – Այո:

ՏՂԱՄԱՐԴ – Եվ վաղո՞ւց:

ԿԻՆ – Այո, որքան ինքս ինձ հիշում եմ: Ձեզ էլի ինչ-որ բան հետաքրքրո՞ւմ
է, թե՛ ես ազատ եմ:
(Իր ողջ տեսքով ցույց է տալիս, որ խոսակցությունն ավարտված է):

ՏՂԱՄԱՐԴ – Դե, ինչո՞ւ այդպես:

ԿԻՆ – Ինչպե՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Դաժանորեն, ես կասեի:

ԿԻՆ – Դաժանորե՞ն...

ՏՂԱՄԱՐԴ – Ախր ես Ձեզ ոչ մի վատ բան չասացի:

ԿԻՆ – Չգիտեմ. ես Ձեզ չէի լսում:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինձ թվաց...

ԿԻՆ – Լսե՛ք, ես հասկանում եմ, որ այս ցուցահանդեսը Ձեր վրա շատ մեծ ազդեցություն է գործել, բայց...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ՝ բայց...

ԿԻՆ – Ես կգերադասեի մնալ մենակ... կներե՛ք:

ՏՂԱՄԱՐԴ – Այո, իհարկե: Անկեղծ ասած, այդ է՛ս պետք է ներողություն խնդրեի:

ԿԻՆ – Պետք չէ անհանգստանալ:

ՏՂԱՄԱՐԴ – Պարզապես ես ուզում էի կիսվել Ձեզ հետ...

ԿԻՆ – Համոզված եմ, որ Դուք դեռ կգտնեք արժանի ունկնդիր:

ՏՂԱՄԱՐԴ – Կարծո՞ւմ եք:

ԿԻՆ – Ես կարծում եմ, որ բոլոր դեպքերում կարիք չկա առաջին պատահած մարդուն պատմել սեփական զգացմունքների մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Գուցե այսօր իմ ծննդյան օ՞րն է... *(Եվս մի փորձ գրույցը շարունակելու համար):*

ԿԻՆ – Գուցե, թե՞...

ՏՂԱՄԱՐԴ – Եթե դրանից է կախված իմ ճակատագիրը, ապա, բնականաբար՝ այո՛:

ԿԻՆ – Ձեր ճակատագիրը...

ՏՂԱՄԱՐԴ – Գիտե՛մ, իմ ձեռքերում է:

ԿԻՆ – Ինձ չի հետաքրքրում:

ՏՂԱՄԱՐԴ – Հասկանում եմ, Ձեզ հետաքրքրում է իմ անունը, ինչով եմ ես զբաղվում, քանի տարեկան եմ դառնում:

ԿԻՆ – *(Մեխանիկորեն)* Եվ քանի՞ տարեկան եք դառնում:

ՏՂԱՄԱՐԴ – 33:

ԿԻՆ – *(Չնայելով նրա կողմը)* Օ՛, Դուք լավ եք պահպանվել:

ՏՂԱՄԱՐԴ – Դե գիտեք, ճիշտ սնունդ... առավոտյան մարմնամարզություն... *(Նման տեսակի ծանոթությունների համար սերտած ֆրագներ):*

ԿԻՆ – *(Կրկին նրա կողմը չնայելով)* Ես այդ իմաստով չեի ասում:

ՏՂԱՄԱՐԴ – Ներեցե՛ք, իսկ ո՞ր իմաստով:

ԿԻՆ – *(Ի վերջո հայացքը նրան սևեռելով և բառերը հատ-հատ արտասանելով)* Օրինավոր մարդիկ Ձեր տարիքում քացախ են խմում Գողգոթայում:

ՏՂԱՄԱՐԴ – Ես նույնպես մեծ հաճույքով կխմեի, բայց ինձ ոչ ոք համբուրել չի ցանկանում: Ոչ մի Զուդա: Շատերին են առաջարկել...
Դե, ես էլ մտածեցի՝ գուցե Դո՞ւք...

ԿԻՆ – Ե՞ս... *(Քնժիծաղով)*: Ես կփորձեի, բայց վախենամ, թե դա Ձեզ չի օգնի:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք ինչ է, վստահ չե՞ք Ձեր ուժերի վրա...

ԿԻՆ – Ինքս ինձ վրա ես վստահ եմ... Իսկ ինչ Ձե՛զ է վերաբերում...

ՏՂԱՄԱՐԴ – *(Շինծու ուշադրությամբ)* Ես լսում եմ:

ԿԻՆ – Դե լավ... ինչպե՞ս Ձեզ ավելի պարզ բացատրեմ:
Բանն այն է, որ Քրիստոսին խաչեցին ո՛չ այն պատճառով, որ Զուդան համբուրել էր նրան: Դա դեռ բավարար պայման չէ...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց՝ անհրաժե՛շտ:

ԿԻՆ – *(Մտախոհ)* Անհրաժե՞շտ...

*Չնչում է ներկայացման երաժշտական թեման՝ թավջութակի սոնատը:
Սկզբում նրանք ուշադրություն չեն դարձնում դրան:*

ՏՂԱՄԱՐԴ – Տեսնո՞ւմ եք... Միգուցե փորձե՞նք: Ես նույնպես տառապել եմ
և, կարծում եմ, մարդկանց ասելու բան ունեմ:

ԿԻՆ – Դա ես նկատեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Պետք չէ հեզմել: Ես իրոք հետաքրքիր զրուցակից եմ:

ԿԻՆ – Ջրուցակից...

ՏՂԱՄԱՐԴ – Եվ հետո՝ տարիքը...

ԿԻՆ – Ի՞նչ տարի՛քը: Ախ այո՛...

ՏՂԱՄԱՐԴ – Ահա տեսնո՞ւմ եք, ամեն ինչ համընկնում է: Զիմա հերթը Ձերն է:

ԿԻՆ – Այսինքն՝ Զուդայի՞նը:

Դե, ես գնամ... *(Իրոք պատրաստվում է հեռանալ):*

ՏՂԱՄԱՐԴ – *(Յուսահատական փորձ)* Սպասե՛ք, դեռ ասելիքս չեմ վերջացրել:

ԿԻՆ – Մեկ ուրիշ անգամ:

ՏՂԱՄԱՐԴ – Եվ հետո, Դուք մոռացաք ծննդյան օրվա մասին:

ԿԻՆ – *(Մեխանիկորեն)* Շնորհավորում եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալ եմ... Դուք ոչինչ չե՞ք մաղթում ինձ:

ԿԻՆ – Առողջ եղեք:

ՏՂԱՄԱՐԴ – Ու վե՞րջ:

ԿԻՆ – Եվ աշխատեք այսուհետ այդքան աներես չլինել:

ՏՂԱՄԱՐԴ – Անկեղծ ասած, ես ավելի շատ բան էի սպասում:

ԿԻՆ – Այդ ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպես թե ինչու: 40 հազար տարի է մարդն ապրում է երկրի երեսին որպես բանական արարած: Վերջին 33 տարին՝ նաև ես: Մի՞թե դա բավական չէ:

ԿԻՆ – *(Նկատելիորեն հանգստացած: Երկխոսությունը վարում է զրուցակցից առավել խելացի մարդու տեսքով):*
Բանական մարդու պատմությունը միշտ էլ լի է եղել թյուրիմացություններով: Եվ վերջին 33 տարին բացառություն չի:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք անտանելի կին եք:

ԿԻՆ – Շնորհակալ եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ձեր հետ հնարավոր չէ բարձրաշխարհիկ զրույց վարել:

ԿԻՆ – Ձեր կարծիքով՝ մենք բարձրաշխարհիկ զրո՞ւյց ենք վարում:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ, բայց...

ԿԻՆ – Դուք պարզապես հիմարություններ եք դուրս տալիս:

ՏՂԱՄԱՐԴ – *(Յամարյա անկեղծ)* Լսե՛ք, իսկ ինչպե՞ս կիրամայեք Ձեզ սիրահետել: Չէ՞ որ ես պետք է ինչ-որ բանով Ձեր ուշադրությունը գրավեմ իմ համեստ անձի նկատմամբ:

ԿԻՆ – Այո՛, բայց ո՛չ այդպես պարզունակ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ պարզունակ:

Պետք է ասեմ, որ ժամանակակիցների հավաստմամբ...

ԿԻՆ – Որքա՞ն եք ինքներդ Ձեզ սիրում:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ թե ինքս ինձ, այլ՝ տարիքս:

ԿԻՆ – *(Չամարյա սկսում է հետաքրքրվել: Չամենայն դեպս, նրան ինչ-որ բան պահում է Տղամարդու կողքին):*

Լավ, Ձեզ՝ այդ տարիքում:

Ի դեպ, Դուք ինքներդ փորձե՞լ եք...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Չամբուրել...

Այս և հետագա մի քանի ռեպլիկները նրանք անսպասելի լուրջ են արտաբերում:

ՏՂԱՄԱՐԴ – *(Գլխով համաձայնության նշան է անում):*

ԿԻՆ – Այդ իմաստով չէ... ինչպես՝ Յուդա...

ՏՂԱՄԱՐԴ – *(Դադար: Նա երկար նայում է Կնոջը) Փորձել եմ...*

ԿԻՆ – Եվ...

ՏՂԱՄԱՐԴ – Կարծում եմ՝ հաջող: *(Դադար):* Գիտե՞ք, ես չեմ կատակում:

ԿԻՆ – *(Դադար) Ես կռահեցի:*

ՏՂԱՄԱՐԴ – Եվ դա Ձեզ չի՞ զարմացնում:

ԿԻՆ – Ոչ... Չգիտեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Դուք, իրոք, զարմանալի կին եք:

ԿԻՆ – Շնորհակալ եմ հաճոյախոսության համար:

ՏՂԱՄԱՐԴ – Դա հաճոյախոսություն չէ...

Ի դեպ, եթե ուզում եք իմանալ, այդ 30 արծաթի հետ կապված պատմությունն ինձ միշտ էլ շինծու է թվացել: Դուք այդպես չե՞ք կարծում...

ԿԻՆ – Ե՞ս... Ես չեմ մտածել այդ մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Պարզ է... Որովհետև Դուք բոլորի նման եք: Չես գտնի որևէ մեկին,

ով ցանկանում է լրջորեն խորհել: Ամեն ինչ հավատով եք ընդունում և կախված է նրանից, թե ինչպես է դա մեզ մատուցվում, ինչ փաթեթավորումով՝ եթե կուզեք...

ԿԻՆ – Այո, բայց Հուդան...

ՏՂԱՄԱՐԴ – Մի շտապեք եզրակացություններ անել... Գուցե Հուդային նույնպես զրպարտել են... անարդարացիորեն զրպարտել են...
Չի բացառվում, որ հենց Հուդան է արժանի այն բարի համբավին, որ վայելում են նրա գործընկերները:
Պատմությունը ծանոթ է նման բազում օրինակների...

ԿԻՆ – Այո, բայց բանն այն է, որ Հուդայի հետ կապված ոչ մի գաղտնիք չկա, ամեն ինչ բավականին պարզ է:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ:

ԿԻՆ – Ուրեմն այդպե՞ս:
(Զգացվում է, որ շարունակում է նրան անլուրջ ընդունել):

ՏՂԱՄԱՐԴ – Այո, այդպե՛ս: Հուդան, ինչպես հիշում եք, Քրիստոսի աշակերտն էր, սիրելի՛ աշակերտը... Ավելին, Հուդան Քրիստոսի գանձապետն էր: Գանձապետը... Պա՞րզ է:

ԿԻՆ – Հետո ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Հուդան ազատ տնօրինում էր Քրիստոսի և առաքյալների դրամը: Ի՞նչ եք կարծում, Քրիստոսը կնշանակե՞ր նրան գանձապետ, եթե կասկածեր նրա ազնվությանը:

ԿԻՆ – Սկզբում, երևի թե, նա իրոք այդպիսին էր... ազնիվ էր:
Բայց հետո, այդ 30 արծաթը...

ՏՂԱՄԱՐԴ – Հասկացե՛ք, փողն այստեղ կապ չունի:
(Ոգևորված): Հուդան իր պարտքն էր կատարում...

ԿԻՆ – Պա՞րտքը...

ՏՂԱՄԱՐԴ – *(Համարյա գոռում է)* Այո՛, քաղաքացիական պարտքը...
Ներեցե՛ք...

Հնչում է երաժշտական թեման:

ՏՂԱՄԱՐԴ – *(Շատ ավելի հանգիստ)* Իսկ ո՞ր ուղղությանն եք դուք նախապատվություն տալիս:

ԿԻՆ – Չհասկացա:

ՏՂԱՄԱՐԴ – Ես նկատի ունեմ գեղանկարչությունը: Դուք, որքան հիշում եմ, տարված եք դրանով:

ԿԻՆ – Այո...

ՏՂԱՄԱՐԴ – *(Արդարանալով, ավելի ճիշտ՝ ձևացնելով, թե արդարանում է)*
Պարզապես ձանձրացա հիմարություններ դուրս տալուց:

ԿԻՆ – Ես չեի ուզում Ձեզ վիրավորել:

ՏՂԱՄԱՐԴ – Դե, լավ... Եվ այսպես, ո՞ր ուղղությամբ եք Դուք
նախապատվություն տալիս. կուբիզմի՞ն, փոփ-արտի՞ն, պուանտիլիզմի՞ն...

ԿԻՆ – *(Շփոթված)* Պուանտիլիզմին...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Նախապատվություն եմ տալիս...

Ֆլիրտը վերջացավ: Նրանք փոխեցին դերերը:

*Այժմ Կինն է շփոթված: Այնպիսի տպավորություն է, որ Տղամարդը բառերի մեջ
հատուկ իմաստ է դնում: Եվ դա մի քիչ նմանվում է հարցաքննության:*

ՏՂԱՄԱՐԴ – Բայց այս պատկերասրահում պուանտիլիստների նկարներ չկան:
Թանգարանում, եթե չեմ սխալվում, կա Սյորա:

ԿԻՆ – Այո՛, այնտեղ իրո՞ք շատ լավ աշխատանքներ կան... *(Հիշելով
նկարչի անունը):* Սյորայի... Իսկ այստեղ ես գալիս եմ, որպեսզի
համեմատեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչը:

ԿԻՆ – Սյորային և այս նկարիչներին:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկապե՞ս:

ԿԻՆ – Այո՛:

ՏՂԱՄԱՐԴ – Գիտե՞ք, ես հիշեցի՝ թանգարանում էլ Սյորա չկա:
(Համարյա չարախնդալով): Ես սխալվեցի:

Դադար:

ՏՂԱՄԱՐԴ – Տարօրինակ է, չէ՞:

ԿԻՆ – Կոնկրետ՝ ի՞նչը:

ՏՂԱՄԱՐԴ – Դե, տարօրինակ է այն, որ Դուք այցելում եք հենց այն սրահը:

ԿԻՆ – *(Ինչ-որ ուժ ստիպում է նրան պատասխանել հարցերին, արդարանալ)* Ինչո՞ւ է տարօրինակ:

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ...

ԿԻՆ – Այստեղ... այստեղ հարմարավետ է... Ես... ես հանգստանում եմ այստեղ:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց թանգարանի նախագիծն այնպիսին է, որ բոլոր սրահները միանման են:

ԿԻՆ – Այո՛, բայց նկարները...

ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն պատճառը նկարնե՞րն են:

ԿԻՆ – *(Անսպասելի կտրուկ)* Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ի՞նչն է:
(Այնպիսի տպավորություն է, որ նա գիտի պատասխանը, բայց նրան դուր է գալիս տանջողի դերը):

ԿԻՆ – *(Պայթելով)* Լսե՛ք, ի՞նչ իրավունքով եք ինձ հարցաքննում:

ՏՂԱՄԱՐԴ – Ուղղակի, ինձ թվաց...

ԿԻՆ – Դուք սխալվում եք:

ՏՂԱՄԱՐԴ – *(Բազմանշանակ ժպիտով)* Եթե այդպես է՝ ներեցեք:

ԿԻՆ – Ես գնամ:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք ի՞նչ պատճառով եք հեռանում:

ԿԻՆ – Չե՞ր... Ո՛չ, պարզապես գործեր ունեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հրաշալի երաժշտություն է... Ձեզ դո՞ւր է գալիս:

ԿԻՆ – Այո՛:

*Երաժշտությունն ավելի բարձր է հնչում:
Երկուսն էլ լսում են:*

ՏՂԱՄԱՐԴ – Այն միշտ հնչում է այս սրահում: Ասում են, որ նկարիչը շատ սիրել է ստեղծագործել այս երաժշտության ներքո:

ԿԻՆ – *(Կեղծ անտարբերությամբ)* Այո՞, ի՞նչ եք ասում:

ՏՂԱՄԱՐԴ – (Չարցաքննունը շարունակվում է) Իսկ Դուք չգիտե՞իք:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Նրան սպանել են:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Նրան սպանել են....

ԿԻՆ – Ինչպես թե՛ սպանել են...

ՏՂԱՄԱՐԴ – Ձեզ հետաքրքրում են մանրամասնե՞րը:

ԿԻՆ – Ի՞նչ... Ո՛չ, ո՛չ... դրանք ինձ չեն հետաքրքրում:

ՏՂԱՄԱՐԴ – Ձե՞ն հետաքրքրում:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Այդ ինչպե՞ս:

ԿԻՆ – Չենց այդպես... Ես չեմ հասկանում ի՞նչն է Ձեզ այդպես զարմացնում...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց... բայց հենց նոր Դուք ասացիք, որ սիրում եք գեղանկարչությունը:

ԿԻՆ – Այո:

ՏՂԱՄԱՐԴ – Չետևաբար Ձեզ պե՛տք է հետաքրքրի նկարչի ճակատագիրը...

ԿԻՆ – Ես սիրում եմ գեղանկարչությունն ընդհանրապես:

ՏՂԱՄԱՐԴ – Ախ ընդհանրապե՛ս...

ԿԻՆ – Այո՛ ընդհանրապես...

ՏՂԱՄԱՐԴ – Տարօրինակ է... Շա՛տ տարօրինակ...

ԿԻՆ – Ի՞նչն է տարօրինակ... Ինչո՞ւ է տարօրինակ...

ՏՂԱՄԱՐԴ – Դե, տարօրինակ է այն, որ Դուք սիրում եք գեղանկարչությունն ընդհանրապես, իսկ այցելում եք հատկապես այն սրահը՝ դիտելու հենց այն նկարչի աշխատանքները:

ԿԻՆ – Լսեք, ինձնից ի՞նչ եք ուզում:

ՏՂԱՄԱՐԴ – Ձեզնի՞ց... ոչինչ: Ձե՞ք կարծում, որ նրա կապույտ գույնը շատ յուրահատուկ է...

ԿԻՆ – ...Այո... յուրահատուկ է:

ՏՂԱՄԱՐԴ – Ես կասեի՝ տազնապալի:

ԿԻՆ – Այո... հավանաբար:

ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացեք, Դուք շատ եք հուզված:

ԿԻՆ – Դե, ոչ, ինչո՞ւ պետք է հուզվեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես էլ եմ մտածում՝ ինչո՞ւ...

ԿԻՆ – Անհեթեթություն է...

ՏՂԱՄԱՐԴ – *(Բավականին երկար զննելով Կնոջը)* Այնուամենայնիվ, ես դեմ եմ, երբ նկարները տեղադրում են շրջանակների մեջ: Դրանք կաշկանդում են երևակայությունը:

ԿԻՆ – Այո, կաշկանդում են...

ՏՂԱՄԱՐԴ – Թեպետ, երբեմն, լավ շրջանակը ինչ-որ բանով լրացնում է կտավը, դարձնում ավելի գունագեղ...

ԿԻՆ – Երբեմն՝ այո...

Երկուսն էլ զգում են, թե որքան անհեթեթ են հնչում Կնոջ «այո»-ները:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք շատ գեղեցիկ աչքեր ունեք... Ինձ թվում է՝ ինչ-որ տեղ Ձեզ արդեն տեսել եմ...

ԿԻՆ – Շատ հնարավոր է:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկապես...

ԿԻՆ – Ինքներդ ասացիք, որ երեք օր առաջ...

ՏՂԱՄԱՐԴ – Երեք օր առաջ ես նույն զգացումն ունեի...

ԿԻՆ – Ձեր սիրախաղը Ձեզ ճղճիմ է դարձնում:

ՏՂԱՄԱՐԴ – Դա արդեն ժանրի պարտադրանքն է:

ԿԻՆ – Ինչի՞:

ՏՂԱՄԱՐԴ – Ժանրի... Սիրախաղն ինքնին ճղճիմ երևույթ է: Հակառակ

դեպքում դա կլիներ ոչ թե սիրախաղ, այլ...

ԿԻՆ – Այո... Դուք իրավացի եք... *(Պատրաստվում է հեռանալ)*:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ իրականում Դուք ինչո՞ւ եք այցելում այս թանգարանը:

ԿԻՆ – Դե, գիտեք, այս ամենն արդեն ձանձրալի է դառնում:

ՏՂԱՄԱՐԴ – Եվ, այնուամենայնիվ...

ԿԻՆ – Լսեք, ես չեմ հարցնում, թե ինչո՞ւ եք Դուք գալիս այստեղ:
Որքան հասկացա, ինձնից պակաս ժամանակ չեք անցկացնում այս սրահում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Ահա, տեսնո՞ւմ եք: Եվ ես դրանում ոչ մի անսովոր բան չեմ տեսնում:

ՏՂԱՄԱՐԴ – Իրո՞ք:

ԿԻՆ – Այո՛...

ՏՂԱՄԱՐԴ – *(Մտաբերելով ինչ-որ բան)* Պարզապես այս երեք օրը Դուք ինձ չէիք նկատում: Ձբաղված էիք ինքների ձեզնով, նկարներով:

ԿԻՆ – Եվ, այնուամենայնիվ, ես հիմա էլ չեմ պատրաստվում որևէ նշանակություն տալ դրան: Քի՞չ առիթ կա այստեղ գտնվելու համար...

ՏՂԱՄԱՐԴ – Գուցե և ճիշտ եք...

ԿԻՆ – Ահա, տեսնո՞ւմ եք... *(Դադար)*: Դուք մամուլի՞ն եք աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Ես հարցնում եմ՝ լրագրո՞ղ եք:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ, ինչո՞ւ եք այդպես կարծում:

ԿԻՆ – Դուք չափազանց աննրբանկատ եք...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ իմաստով:

ԿԻՆ – Վարվեցողության մեջ:

ՏՂԱՄԱՐԴ – Չհասկացա:

ԿԻՆ – Ի՞նչ կա չհասկանալու... Դուք մոռանում եք, որ Ձեր առջև կին է, և՛

որ մենք անծանոթ ենք:

ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն եկեք ծանոթանանք: Կարծում եմ՝ ճիշտ ժամանակն է:

ԿԻՆ – Թողնենք հաշորդ անգամ:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց...

ԿԻՆ – Հավատացեք, այդպես ավելի ճիշտ կլինի:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, ինչպես կամենաք...

ԿԻՆ – Գիտեք ինչ, չեմ թաքցնում, Դուք ինձ մասամբ հետաքրքրեցիք, մի քիչ զվարճացրիք, ցրեցիք մտքերից, որի համար ես շնորհակալ եմ: Բայց բանն այն է, որ ես դժվարությամբ եմ մտերմանում մարդկանց հետ և հազվադեպ եմ փնտրում նոր ծանոթություններ... Այդ պատճառով, եթե չեք առարկում, թող ամեն ինչ մնա առաջվանը... առանց բացելու փակագծերը...
Լա՞վ:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ:

Դե ինչ, ներեցեք ինձ, եթե... եթե ինչ-որ բանում իրավացի չեի...
Պարզապես ինձ թվաց...

ԿԻՆ – Ձեզ իսկապես թվացել է:

ՏՂԱՄԱՐԴ – Որ Դուք պատահաբար չեք գտնվում այստեղ...

ԿԻՆ – Անհեթեթություն...

ՏՂԱՄԱՐԴ – ...Որ Դուք գալիս եք այստեղ, որովհետև անձամբ ճանաչում էիք նկարչին...

ԿԻՆ – Անհեթեթություն է...

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ է անհեթեթություն, տիկին:

ԿԻՆ – Անհեթեթություն է և վե՛րջ...

ՏՂԱՄԱՐԴ – Լսեք, Դուք կանոնավոր կերպով գալիս եք այս սրահ, այս նկարների մոտ, Ձեր օրն այստեղ եք անցկացնում և միաժամանակ հրաժարվում եք այդ ամենից: Կտրականապես հրաժարվում եք:

ԿԻՆ – Ձեզ... Ձեզ դա թվացել է:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ:

ԿԻՆ – Հետո՞ ինչ... գալիս-գնում եմ... Հետո՞ ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ, բայց...

ԿԻՆ – Ի՞նչ՝ բայց...

ՏՂԱՄԱՐԴ – Դա անտրամաբանական է:

ԿԻՆ – Անտրամաբանակա՞ն... Իսկ մնացածը տրամաբանակա՞ն է:
Այն ամենն, ինչ Ձեզ շրջապատում է՝ տրամաբանակա՞ն է:
Խոսե՛ք, տրամաբանակա՞ն է...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց, այնուամենայնիվ...

ԿԻՆ – Դե, լավ, ենթադրենք, որ ես նրան ճանաչել եմ... Ենթադրենք...
Չետո՞ ինչ...

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ... Միայն թե ինչո՞ւ եք այդ թաքցնում...

ԿԻՆ – Ի՞նչը:

ՏՂԱՄԱՐԴ – Այն, որ ծանոթ եք եղել նրա հետ:

ԿԻՆ – Ձեր կարծիքով, ես պարտավոր եմ դրա մասին պատմել առաջին
իսկ հանդիպած մարդո՞ւն:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց համառորեն բացառել ակնհայտը... Ձեզ չի՞ թվում, որ մի
տեսակ տարօրինակ է...

ԿԻՆ – Ո՛չ, չի թվում...

ՏՂԱՄԱՐԴ – Նրան սպանեցին տաղանդի ծաղկման շրջանում...
Չամենայնդեպս, թերթերն այդպես են գրում:
Դուք այդպես չե՞ք կարծում:

ԿԻՆ – Ես թերթ չեմ կարդում: Եվ հետո՞ նրան չեն սպանել... Նա ինքն է...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նքն է...

ԿԻՆ – Այո՛...

ՏՂԱՄԱՐԴ – Դե, իհարկե, վերջիվերջո, մարդը միշտ էլ ի՛նքն է մահանում...
Նույնիսկ այն պարագայում, երբ նրան օգնում են դա անել...
Երբեմն...

ԿԻՆ – Ի՞նչ եք ուզում ասել:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ... Ուրեմն, Դուք կարծում եք, որ նա ի՛նքն է մահացել...
առանց որևէ մեկի օգնությա՞ն...

ԿԻՆ – Ի՞նչ է նշանակում՝ ես կարծում եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Այն, որ ակնհայտ է:
Ինչ է, Դուք հիմքեր չունե՞ք այդպես կարծելու:

ԿԻՆ – Լսե՛ք, մի՞թե հնարավոր չէ ուրիշ բանի մասին գրուցել:

ՏՂԱՄԱՐԴ – Միգուցե ինձ դուր է գալիս, թե ինչպես եք Դուք զայրանում:

ԿԻՆ – Դա արդեն հիմարություն է:

ՏՂԱՄԱՐԴ – Օ՛, ես տեսնում եմ, որ Դուք պակաս աննրբանկատ չեք վարվեցողության մեջ:

ԿԻՆ – Չի բացառվում: Համենայնդեպս, ես անտակտ հարցեր չեմ տալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչ է, ես անտա՞կտ հարցեր եմ տալիս:

ԿԻՆ – Չգիտեմ... Գուցե ես չափազանցնում եմ, բայց... բայց հեզմանքը...
Ձեր խոսքի հեզմանքը...
Այնպիսի տպավորություն է, որ Դուք ինձ հարցաքննում եք:

ՏՂԱՄԱՐԴ – Ամեն ինչում Դո՛ւք եք մեղավոր, տիկի՛ն...

ԿԻՆ – Ինչպե՞ս թե՛ ես:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք չեք ցանկանում հագուրդ տալ իմ բնական
հետաքրքրասիրությանը... Դուք չեք պատասխանում իմ հարցերին...

ԿԻՆ – Բայց, ներեցեք, ինչո՞ւ ես պետք է...

ՏՂԱՄԱՐԴ – ...Անմեղ հարցերին...

ԿԻՆ – Ես Ձեզ հարցնում եմ՝ ինչո՞ւ ես պետք է...

ՏՂԱՄԱՐԴ – Եթե Դուք միանգամից պատասխանեիք իմ հարցերին...

ԿԻՆ – Վերջ տվեք...

ՏՂԱՄԱՐԴ – Ներեցե՛ք...
Այսպես ուրեմն, նա ինքը մահացավ... *(Կինը չի պատասխանում)*:
Ըստ էության, դա քիչ բան է փոխում:
Գլխավորն այն է, որ նա այլևս ողջ չէ... ճիշտ չե՞մ ասում:

ԿԻՆ – Այո, երևի...

ՏՂԱՄԱՐԴ – Թե՞ Դուք այդպես չեք կարծում:

ԿԻՆ – *(Շարունակում է ցնցվել յուրաքանչյուր հարցից)* Ինչպե՞ս...

ՏՂԱՄԱՐԴ – *(Կտրուկ փոխելով խոսքի երանգը: Շատ կտրուկ)*
Որտեղի՞ց եմ Ձեզ հայտնի:

ԿԻՆ – Ի՞նչը...

ՏՂԱՄԱՐԴ – Մանրամասները:

ԿԻՆ – Ո՞ր մանրամասները:

ՏՂԱՄԱՐԴ – Այն, որ նրան չեն սպանել *(խիստ)*, այլ՝ ինքը...

ԿԻՆ – Ինձ հանգի՛ստ թողեք:

ՏՂԱՄԱՐԴ – Ես Ձեզ օգնել եմ ուզում:

ԿԻՆ – Ես Ձեր կարիքը չունեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Վստա՞հ եք:

ԿԻՆ – Այո՛:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպես կուզե՛ք...

ԿԻՆ – Ես գնամ...

ՏՂԱՄԱՐԴ – Գնացե՛ք: *(Համոզված, որ չի հեռանա):*

ԿԻՆ – Ծիտեմ ու գնամ: *(Ծիտում է):*

ՏՂԱՄԱՐԴ – Վաղո՞ւց էիք նրան ճանաչում:

ԿԻՆ – *(Որոշ չափով ինքն իրեն տիրապետելով)* Ես Ձեզ չասացի, որ մենք
ծանոթ էինք: Ես ասացի՝ ենթադրենք... ենթադրենք, թե ծանոթ էինք...
Հետո՞ ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Հիմա ծանոթ՞եք էիք, թե՛ ոչ:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Դե, իհարկե, մինչև Ձեր ծանոթությունը դուք, իրոք անծանոթ էիք:
(«Կտտանքը» շարունակվում է):
Եվ այստեղ Դուք գտնվում եք պատահմամբ, թե ոչ պատահմամբ,
այն է խնդիրը...
Ի՞նչ եք կարծում, ես կկարողանա՞յի Համլետ խաղալ...

ԿԻՆ – Դուք խելագա՞ր եք:

ՏՂԱՄԱՐԴ – Իհարկե՞ ո՛չ: Եվ Դուք դա շատ լավ գիտեք:
(Փոխելով ձայնի հնչեղանգը): Այսպես ուրեմն, Դուք եկել եք այստեղ...
 ա՛խ, այո՛, Դուք պարզապես սիրում եք գեղանկարչությունը...
 Ցավալի՞ է...

ԿԻՆ – Ի՞նչը:

ՏՂԱՄԱՐԴ – Ցավալի է, որ այս թանգարանում Սյորա չկա: Նա մեծ նկարիչ էր:
 Այսինքն՝ ի՞նչ եմ Ձեզ ասում: Դուք ինքներդ էլ գերազանց գիտեք...

ԿԻՆ – Ես ոչինչ չգիտե՛մ...

ՏՂԱՄԱՐԴ – Ես Սյորայի մասին եմ ասում...

ԿԻՆ – Դուք հանելուկներով խոսելու նողկալի սովորություն ունեք:

ՏՂԱՄԱՐԴ – Այո՞: Ես չգիտեի:

ԿԻՆ – Հիմա իմացա՞ք...

ՏՂԱՄԱՐԴ – Այո, իմացա...

ԿԻՆ – Դե, ես գնամ:

ՏՂԱՄԱՐԴ – Գնացե՛ք...

Կինը գնում է դեպի դուռը:

ՏՂԱՄԱՐԴ – *(Նրա ետևից)* «Միջահասակ, կանոնավոր դիմագծեր, երկար
 մազեր, աչքերը...»

ԿԻՆ – Դա ի՞նչ է:

ՏՂԱՄԱՐԴ – Մարդասպանի նախանշանները:

ԿԻՆ – Դուք որտեղի՞ց գիտեք:

ՏՂԱՄԱՐԴ – Իրենի՛ց...

ԿԻՆ – *(Անհանգիստ)* Մի՞թե նա ողջ է...

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ... Բայց նա հասցրել է նկարագրել մարդասպանի
 արտաքինը: *(Կտրուկ):* Լսո՞ւմ եք՝ հասցրել է նկարագրել և
 բավական մանրամասն:
 Դա նրա վերջին դիմանկարն է:

ԿԻՆ – Վերջացրե՛ք...

ՏՂԱՄԱՐԴ – *(Մտտեճում է)* Ձեզ այստեղ գալ չի՛ կարելի: Դուք անզգուշություն եք թույլ տալիս:

ԿԻՆ – Բայց ես... ես այնպիսի արարք չեմ գործել, որ...

ՏՂԱՄԱՐԴ – Չնարավոր է, բայց Ձեր արտաքինը...

ԿԻՆ – *(Փորձելով շեղել խոսակցությունը)* Ես Ձեզ դո՞ւր եմ գալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ես պարզապես համեմատում եմ *(զննելով նրան)*.
«Միջահասակ, երկար մազեր...»

ԿԻՆ – Վերջացրե՛ք...

ՏՂԱՄԱՐԴ – Դուք չպե՛տք է վախենաք ինձնից:

ԿԻՆ – *(Փորձում է անհոգ երևալ)* Ոչ էլ վախենում եմ:
Ինչո՞ւ պիտի վախենայի...
Լսե՛ք... Դուք պատահաբար...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ, ես ուրիշ տեղ եմ աշխատում:

ԿԻՆ – Այդ դեպքում որտեղի՞ց գիտեք մանրամասները...

ՏՂԱՄԱՐԴ – Դա ոչ մի նշանակություն չունի:

Նորից հնչում է երաժշտությունը:

ԿԻՆ – Աստված իմ, կրկին այս երաժշտությունը...

ՏՂԱՄԱՐԴ – Չէ՞ որ դա Ձեզ դուր էր գալիս:

ԿԻՆ – *(Մեծ ջանքով)* Չիմա էլ է ինձ դուր գալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ սպանեցիք նրան:

ԿԻՆ – Ե՞ս...

ՏՂԱՄԱՐԴ – Այո՛, Դո՛ւք... Դուք գնացիք նրա արվեստանոցը...

ԿԻՆ – Ո՛չ...

ՏՂԱՄԱՐԴ – Նա Ձեզ սպասում էր...

ԿԻՆ – Ես... ե՛ս չեմ սպանել նրան...

ՏՂԱՄԱՐԴ – Դա ճիշտ չէ՛:

ԿԻՆ – ճիշտ է...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ:

ԿԻՆ – Այո՛:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց նա մեռած է:

ԿԻՆ – Այո՛, մեռած է... Իսկ ինչո՞ւ ես պիտի պատասխանատվություն կրեմ դրա համար:

ՏՂԱՄԱՐԴ – Այդ ամենը հասարակության անկատարելության պատճառով է, տիկի՛ն:
Այսպես ասած՝ իրավագիտության ծախքեր... Եթե որևէ մեկին սպանում են...

ԿԻՆ – Ես... ես մարդասպան չեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Այդ դեպքում՝ ո՞վ եք Դուք...

ԿԻՆ – Ինչո՞ւ ես պետք է Ձեզ հավատամ:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք ընտրություն չունեք:

Դադար:

ԿԻՆ – Նոպա սկսվեց...

ՏՂԱՄԱՐԴ – Սի՞րտը:

ԿԻՆ – Սինչ այդ նման բան չէր պատահել: Այսինքն՝ պատահել էր, իհարկե, բայց այդպիսի ուժգնությամբ՝ առաջին անգամ էր:
Նա շնչահեղձ էր լինում...
Ես գլուխս կորցրեցի: Չգիտեի, ինչ անել: Արկղիկում ինչ-որ դեղ գտա... նա ինքը խնդրեց... Հետո նրա վիճակն ավելի վատացավ, և ես սարսափահար փախա:
Հասկանում եմ, որ չպետք է այդպես վարվեի: Բայց, հավատացե՛ք, ես մենակ էի ու վախենում էի...
Ո՛չ, ես այլևս չեմ կարող...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչո՞ւ բժիշկ չկանչեցիք:

ԿԻՆ – Չգիտեմ, ես կարծում էի, որ ամեն ինչ կանցնի: Չէ՞ որ դա առաջին անգամը չէր: Եվ հետո ես ինձ կորցրել էի....

Երկուսն էլ երկար լռում են:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք նրա սիրուհի՞ն էիք:

ԿԻՆ – Ես պարտավոր եմ պատասխանել:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ, իհարկե... Ներեցեք:

ԿԻՆ – Ա՛խ, պետք չէ ավելորդ նրբանկատություն ցուցաբերել: Այն ամենից հետո, ինչ այստեղ խոսվեց...

ՏՂԱՄԱՐԴ – Ուզում եք ասել, որ արժանի չէի՞ք դրան:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – *(Քմժիծաղով)* Իհարկե, ի վերջո աշխարհի վրա ոչ մի կին չի ստանում այն, ինչին նա իսկապես արժանի է:

ԿԻՆ – Չգիտեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Մի քիչ հանգստացա՞ք:

ԿԻՆ – Այո: Հիմա ի՞նչ անեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ապրե՛ք...

ԿԻՆ – Ու վե՞րջ...

ՏՂԱՄԱՐԴ – Ու վերջ:

ԿԻՆ – Ո՛չ, ես չեմ կարող: Նա հետապնդում է ինձ... Այս նկարները... Նրանք ամենուրեք են...

ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացե՛ք...

ԿԻՆ – Սրանք հետապնդում էին ինձ... դեռ նրա կենդանության օրոք: Ես ատում եմ նրան... Ատում եմ նրա նկարները: Ես էլ հույս էի փայփայում, որ նրանից հետո...

ՏՂԱՄԱՐԴ – Նրա մահից հետո...

ԿԻՆ – *(Ատելությանը Տղամարդուն է նայում)* ...Այո՛... կխաղաղվեմ... Բայց, երևի, այս ամենը վերջ չի ունենա: Ես կխելագարվեմ... *(Կինը հիստերիայի մեջ է):*

ՏՂԱՄԱՐԴ – *(Գրկելով նրա ուսերը)* Հանգստացե՛ք:

ԿԻՆ – Ինձ հանգիստ թողեք... Չեզ ի՞նչ է պետք: Գնացե՛ք, պատմե՛ք բոլորին, որ ես եմ սպանել նրան:

Այո՛, ես սպանե՛լ եմ, սպանե՛լ եմ, սպանե՛լ եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացե՛ք, լսո՞ւմ եք:

ԿԻՆ – Հեռացե՛ք...

ՏՂԱՄԱՐԴ – Մարդ կարող է գալ: Վերջացրե՛ք հենց հիմա:

ԿԻՆ – Ձեզ էլ ի՞նչ է պետք... Չէ՞ որ ես ամեն ինչ խոստովանեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Դեռ՞ ոչ:

ԿԻՆ – Էլ՞ ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ուզում եմ իմանալ՝ ինչո՞ւ սպանեցիք նրան:

ԿԻՆ – Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – *(Բղավելով)* Ինձ անհրաժե՛շտ է իմանալ:

ԿԻՆ – *(Ոչ թե հանգստացած, այլ մի տեսակ ծակատագրական անտարբերությամբ)* Նա ամեն ինչ խլեց ինձնից:

ՏՂԱՄԱՐԴ – Եվ Դուք որոշեցիք վրեժ լուծել:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Այո...

ԿԻՆ – *(Չարդարանալով, պարզապես պատմում է: Նրան արտահայտվել է պետք)* Մինչ նրան հանդիպելը, ամեն ինչ հեշտ էր ու պարզ:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ւմ համար էր հեշտ:

ԿԻՆ – Բոլորի:

Նա կարողանում էր կարդալ ուրիշի մտքերը: Նա խոսում էր այն մասին, ինչն ընդունված է պարզապես լռության մատնել...

Այսինքն՝ նկարում էր:

Պատկերացրեք, որքան սարսափելի է, երբ մեկ ուրիշը կռահում, կարդում է քո մտքերը:

Եվ դա դեռ բոլորը չէ, նա այդքանով չէր բավարարվում:

Նա գունազարդում էր դրանք և նետում երեսիդ՝ ա՛ռ, զմայլվի՛ր քո ոչնչությամբ:

Իսկ ո՞վ ոչնչություն չէ: Ո՞վ... Դո՞ւք, նրա՞նք:

Ո՛չ որ... Լսո՞ւմ եք, ոչ որ:

(Լարված քայլում է սրահով):

Մենք լավն ենք, երբ սանրված ու պճնված ենք:

Ապա փորձիր մերկացնել, նայել ներսը՝ ավելի խորը:

Խենթանալ կարելի է...

Բայց ոչ ոք այդ չի անում: Իսկ գիտե՞ք ինչու:

Ոչ մեկին դա ձեռնտու չէ:

Այո՛, այո՛, ինչ-որ մի գերագույն պայմանավորվածությամբ մարդիկ միմյանց չեն ընդունում այնպիսին, ինչպիսին կան իրականում, այլ՝ այնպիսին, ինչպիսին իրենք են իրենց ներկայացնում:

Դե՛ կոկած, սղալած...

Երևի, պատճառն այն է, որ այդպես ավելի հարմար է կամ՝ ավելի անվտանգ...

Կամ այն, որ մարդիկ անտարբեր են մեկը մյուսի նկատմամբ:

Կամ գուցե մեկ ուրիշ պատճառ կա...

Եվ բոլորին դա ձեռք է տալիս... Ավելի ստույգ՝ ո՛չ բոլորին...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ավելի հեշտ չէ՞ր լինի պարզապես հեռանալ նրանից:

ԿԻՆ - Նրանից՝ այո: Իսկ ինքս ինձնի՞ց...

Չէ՞ որ ես հիմա գիտեմ այն, ինչի մասին առաջ միայն կռահում էի:

Նա հարկադրեց ինձ մտածել:

Գիտե՞ք, թե որքան ահավոր է՝ մտածել, զգալ, գնահատել... ինքդ քեզ... այլոց...

Առաջ այդպես չէր...

ՏՂԱՄԱՐԴ – Շարունակե՛ք:

ԿԻՆ – Նա հարցեր էր տալիս, պարզ, անմիտ հարցեր, որոնց վրա սովորաբար ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Դե՛ ճի՞շտ է արդյոք կառուցված այս աշխարհը, ո՞րն է քո դերն այս կյանքում, ի՞նչն է գերագույն իմաստը: Նա տալիս էր այդ հարցերը, բայց այնպես, որ հնարավոր չէր լռել, անցնել կողքով, չմտորել:

Տալիս էր հարցեր, որոնք չունեին պատասխաններ:

Նա գերազանց գիտեր այդ, բայց շարունակում էր հարցնել:

Նա տանջում էր ինձ, իրեն շրջապատող մարդկանց:

Նա վտանգավոր մարդ էր: Վտանգավոր ոչ միայն իր մտերիմների համար:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք արդարացո՞ւմ եք փնտրում:

ԿԻՆ – Չգիտեմ...

Պարզապես ինձ անհրաժեշտ էր արտահայտվել....

Ես այլևս չէի կարող լռել... Ես դարձել էի այս նկարների, այդ հարցերի ու ինքս իմ ստրուկը...

Նա չկա, բայց ինձ ավելի վատ են զգում:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք պե՛տք է մոռանաք այս նկարները, նրան....

ԿԻՆ – Դա անհնար է...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց ինձ համար, այնուամենայնիվ, շատ զարմանալի է՝ ինչպե՞ս Դուք կարողացաք կատարել այդ... այդ...

ԿԻՆ – Սպանությունը...

ՏՂԱՄԱՐԴ – Այո՛: Չէ՞ որ Դուք չունեք այդքան վճռականություն...

ԿԻՆ – *(Քնժիժաղով)* Դուք ճիշտ եք, որովհետև իրականում ես նրան չեմ սպանել:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Ես ասացի՝ նա նոպա ունեցավ, ուժեղ ցավեր... Նա խնդրեց որևէ հանգստացնող բան տալ... Շատ էր ուզում ավարտել նկարը...

ՏՂԱՄԱՐԴ – Եվ Դուք...

ԿԻՆ – Ասալիլինի երկու հար տվեցի....

ՏՂԱՄԱՐԴ – Բայց Դուք գիտեիք, որ նա թրոմբ ունի, և ասալիլինի երկու հարը նրա համար մահացու է...

Դադար:

ԿԻՆ – Այո՛, գիտեի...

*Նորից հնչում է երաժշտություն:
Երկուսն էլ քարացած լսում են:*

ՏՂԱՄԱՐԴ – Երաժշտությունը Ձեզ այլևս չի՞ խանգարում:

ԿԻՆ – Ոչ:

Նրանք շարունակում են լսել:

ԿԻՆ – Ի՞նչ կլինի հիմա...

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ:

ԿԻՆ – Ինձ կձերբակալե՞ն:

ՏՂԱՄԱՐԴ – Հավանաբար:

ԿԻՆ – Բայց ինչու՞... Չէ՞ որ ես չեի ուզում... Ես չգիտեի...

ՏՂԱՄԱՐԴ – Այդ Դուք ի՞նձ եք ասում:

ԿԻՆ – Այո, նաև՝ Ձեզ:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, թողնենք դա:

ԿԻՆ – Ո՛չ, շարունակեք:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք վերջինն էիք, ով նրան կենդանի է տեսել:

ԿԻՆ – Հետո ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ մինչև հիմա Դուք այդ մասին չեք հայտնել:

ԿԻՆ – Ես չգիտեի...

ՏՂԱՄԱՐԴ – Ձեզ փնտրում են:

ԿԻՆ – Փնտրո՞ւմ են:

ՏՂԱՄԱՐԴ – Այո... Հավանաբար՝ այո:

ԿԻՆ – Բայց... բայց ինչո՞ւ: Հետո ինչ, որ ե՛ս եմ վերջինը նրան ողջ տեսել:

ՏՂԱՄԱՐԴ – Ձեզ կասկածելի չի՞ թվում այն փաստը, որ մինչև հիմա Դուք չեք հայտնել այդ մասին:

ԿԻՆ – Բայց ոչ ոք ինձ չի հարցրել:

ՏՂԱՄԱՐԴ – Դա ոչ մի նշանակություն չունի:

ԿԻՆ – *(Հանկարծ ինչ-որ բան մտաբերելով)* Սպասե՛ք, ինչո՞ւ եք ասում, թե ե՛ս եմ նրան վերջինը ողջ տեսել...
Իսկ Դո՞ւք:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Մի՞թե Դուք...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ: Երբ ես մտա արվեստանոց, նա արդեն մեռած էր:

ԿԻՆ – *(Հասկանում է, որ հրեշավոր սադրանքի զոհ է դարձել)* Այդ դեպքում Ձեզ որտեղի՞ց են հայտնի...

ՏՂԱՄԱՐԴ – Մարդասպանի նշաններ՞ը... Ես դրանք չգիտեի...
Պարզապես ես Ձե՛զ էի նկարագրում:

ԿԻՆ – Դուք ստում եք....

ՏՂԱՄԱՐԴ – Լա՛վ, ստում եմ... Բայց դրանից ի՞նչ է փոխվում:

ԿԻՆ – Սրիկա՛... Նենգաշո՞րթ... Ես... ես Ձեզ ոչինչ չեմ ասել:
Ես Ձեզ չեմ ճանաչում:

Ես ազատ ժամանակ ունեի և ես... Ես որոշեցի այն անցկացնել
այստեղ...

Դուք ոչինչ չեք կարող ապացուցել:

Ձեզ ոչ ոք չի հավատա: Ես ոչինչ չգիտեմ և չեմ էլ ուզում իմանալ:

Երաժշտությունն ավելի բարձր է հնչում:

ԿԻՆ – Նորից այս երաժշտությունը: Ինչո՞ւ այս երաժշտությունը...

Ահավոր է... Դադարեցրե՛ք...

Այն հետապնդում է ինձ:

Ես ոչինչ չգիտեմ, լսո՞ւմ եք: Այդ ամենը ճշմարտացի չէ՛...

ՏՂԱՄԱՐԴ – Վերջացրե՛ք հիստերիկան: Ես չեմ պատրաստվում որևէ տեղ
հայտնել:

Մի՞թե Դուք այդպես էլ ոչինչ չհասկացաք:

Սիգարետ ուզու՞մ եք:

ԿԻՆ – Այո:

Երկուսն էլ ծխում են:

ՏՂԱՄԱՐԴ – Այսպես, նա իրո՞ք մահացած էր, երբ ես մտա արվեստանոց:

ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ Դուք մտածեցիք, որ այդ ես եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Դե լավ՝ ես գիտեի Ձեր մասին:

Տեսել էի Ձեր դիմանկարը: Եվ հետո՝ նա էր պատմել:

Իսկ երեք օր առաջ...

ԿԻՆ – Ի՞նչ՝ երեք օր առաջ...

ՏՂԱՄԱՐԴ – Երեք օր առաջ ես առաջին անգամ Ձեզ տեսա այստեղ...

Ու հանկարծ մտածեցի...

ԿԻՆ – Ուրեմն, իրականում Դուք ոչինչ չգիտեի՞ք...

ՏՂԱՄԱՐԴ – *(Գլխով է անում):*

ԿԻՆ – Հիմարություն ստացվեց:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ նկատի ունեք:

ԿԻՆ – Ամեն ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ հիմարություն: Մի՞թե հիմա չթեթևացաք:

ԿԻՆ – Թեթևացա՞մ...

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Հնարավոր է, այո, թեթևացա...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչո՞ւ եք գալիս այստեղ:

ԿԻՆ – Չգիտեմ... Ամեն օր ինքս ինձ խոսք եմ տալիս, որ էլ չեմ գա, բայց չեմ կարողանում:

ՏՂԱՄԱՐԴ – Դա կարող է կասկածների տեղիք տալ...

ԿԻՆ – Այո, հնարավոր է: Մինչ այժմ ես դրան նշանակություն չէի տալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ձեզ անհրաժեշտ է այստեղից հեռանալ:

ԿԻՆ – Դուք ճի՛շտ եք... Ես այդպես էլ կանեմ...
(*Վախենալով ինչ-որ բանից*): Իսկ Դո՞ւք...

ՏՂԱՄԱՐԴ – Կարող եք հանգիստ լինել: Ես չեմ պատրաստվում ոչ մի տեղ հայտնել:

ԿԻՆ – Շնորհակալ եմ... (*Պատրաստվում է գնալ*):
Ասացե՛ք, իսկ Դո՞ւք ինչպես հայտնվեցիք նրա արվեստանոցում:

ՏՂԱՄԱՐԴ – Դա կարևոր չէ:

ԿԻՆ – Այնուամենայնիվ:

ՏՂԱՄԱՐԴ – Դուռը... Դուք մոռացել էիք Ձեր ետևից փակել դուռը:

ԿԻՆ – Այո, բայց ի՞նչ նպատակով էիք գնացել այնտեղ:

ՏՂԱՄԱՐԴ – Քի՞չ էին պատահական մարդիկ օրվա ընթացքում այցելում նրան:
Միգուցե, ես նրա բազմաթիվ երկրպագուներից մեկն էի:

ԿԻՆ – Երկրպագուներից մե՞կը:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – (*Լարված ուշադրությամբ, կռահելով, հիշելով ինչ-որ բան*)
Ո՛չ, Դուք նման չեք երկրպագուի...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ո՞ւմ եմ ես նման...

ԿԻՆ – Ոչ, ոչ, ավելի շուտ՝ ընդհակառակը:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ է նշանակում՝ ընդհակառակը:

ԿԻՆ – Չգիտեմ: Դուք ավելի լավ կհմանաք:

ՏՂԱՄԱՐԴ – Դե, ես էլ ասում եմ, որ ես նրա բազմաթիվ երկրպագուներից մեկն էի:

ԿԻՆ – Ո՛չ, դա ճիշտ չէ: Ես ճանաչեցի Ձեզ...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Ես ճանաչեցի Ձեզ...

ՏՂԱՄԱՐԴ – Սխալվում եք, տիկին:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Գիտեք ինչ՝ Դուք, իրոք, հարուստ երևակայություն ունեք:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Հուդա՛...

ՏՂԱՄԱՐԴ – Տեսնո՞ւմ եք, մենք կրկին վերադարձանք մեր խոսակցության սկզբին:

ԿԻՆ – Լսե՛ք...

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, ասե՛ք թե...

ԿԻՆ – Նշանակում է, Դուք խոստովանվում եք:

ՏՂԱՄԱՐԴ – Անշո՛ւշտ, եթե նկատի ունենանք երևակայությունը:
Ես նույնիսկ ուրախ եմ, որ իմ երևակայությունը Ձերինից ավելի վառ է:

ԿԻՆ – Վախկո՛տ:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք չգիտեք ինչպե՛ս վիրավորել ինձ:

ԿԻՆ – Վախկո՛տ, վախկո՛տ, վախկո՛տ...

ՏՂԱՄԱՐԴ – Լա՛վ, վախկոտ: Միայն թե՛ պետք չէ դրան չափից ավելի նշանակություն տալ:

ԿԻՆ – Ինչո՞ւ, չե՞ք սիրում նայել հայելու մեջ:

ՏՂԱՄԱՐԴ – Դատելով Ձեր արարքից, Դուք՝ նույնպես:
Կրկնում եմ՝ ես չեմ կարծում, որ իմ անձն այս... գործում...

ինչ-որ հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է հիշատակման:

ԿԻՆ – Քիչ առաջ Ձեզ դժվար էր պատկերացնել համեստ:

ՏՂԱՄԱՐԴ – Պարզապես քիչ առաջ Դուք ինձ լավ չէիք ճանաչում:

ԿԻՆ – Այո, իսկապես, ես Ձեզ լավ չէի ճանաչում:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ հիմա ճանաչեցի՞ք:

ԿԻՆ – Հիմա՝ ճանաչեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Տեսա՞ք ինչ լավ ստացվեց: Վերջապես ծանոթացանք: Թե չէ անհարմար բան էր ստացվում: Մեկ ժամ է զրոււցում ենք...

Երաժշտություն:

*Կինը մոտենում է Տղամարդուն և ուշադիր նայում է նրան:
Տղամարդը ժպտում է:*

ԿԻՆ – Ուրեմն ես չսխալվեցի, երբ Ձեզ սրիկա անվանեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Ես կրկնում եմ՝ Դուք սխալվեցիք:

ԿԻՆ – Ո՛չ, Դուք սրիկա՛ եք: Ինչու՞ եք այստեղ... Նա պատմել էր ինձ, թե ինչպես էիք հետապնդում նրան:

ՏՂԱՄԱՐԴ – Այն ամենից հետո, ինչ Դուք արել եք, դեռ համարձակություն ունեք հայտարարել, թե ես կամ մեկ ուրիշը նրա հետ վա՞տ է վարվել:

ԿԻՆ – Այո՛: Ես սպանեցի նրան: Բայց առանց մտածելու և՛ մեկ անգամ: Իսկ Դուք սպանել եք նրան ամեն օր: Դուք թունավորել եք նրա կյանքը Ձեր գծուծ, մանր գոյությամբ, Ձեր խառնակչությամբ:

ՏՂԱՄԱՐԴ – Տիկի՛ն, Դուք խելքներդ թռցրել եք:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Լսե՛ք, Դուք հասկանո՞ւմ եք՝ ինչ եք խոսում:

ԿԻՆ – Դուք նույնիսկ խիզախություն չունեք խոստովանելու:

ՏՂԱՄԱՐԴ – Խոստովանե՞լ... Ի՞նչ խոստովանել: Այն, որ Դո՞ւք եք արել:

ԿԻՆ – Այն, որ երկուսս ենք արել:

ՏՂԱՄԱՐԴ – Ես դարձյալ կրկնում եմ՝ պետք չէ չափից մեծ նշանակություն տալ

իմ համեստ անձին:

ԿԻՆ – Ուրեմն այդպե՞ս...

ՏՂԱՄԱՐԴ – Այո: Կարիք չկա ինձ վերագրելու ուրիշի սխրանքները:

ԿԻՆ – Դա սխրանք չէ՛:

ՏՂԱՄԱՐԴ – Առավել ևս... առավել ևս, որ ես այդպես չեմ կարծում...

Չնչուն է երաժշտությունը:

ՏՂԱՄԱՐԴ – Այս երաժշտությունը յուրաքանչյուրին կարող է հունից հանել:

ԿԻՆ – Չիմա էլ Ձե՞զ դուր չի գալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Ինձ երբեք էլ դուր չի եկել:

Ես ընդհանրապես թավջութակ չեմ սիրում:

Դա մի տեսակ ոչ կատարյալ գործիք է: Ո՛չ ջութակ է, ոչ կոնտրաբաս, ինչ-որ միջանկյալ բան...

Իսկ ես չեմ ընդունում կիսատ-պռատությունը:

ԿԻՆ – Իսկ մարդկա՞նց:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ մարդկանց:

ԿԻՆ – Նրանց է՞լ եք նույն չափանիշներով դատում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Այդ դեպքում ինչո՞ւ էիք նրան ատում:

Թե՞, Ձեր կարծիքով, նա էլ էր...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ: Նա իրենից ներկայացնում էր, որոշ իմաստով, կատարելության չափանիշ, եթե կարելի է այդպես արտահայտվել:

Բայց կատարելություն խոսքի վատ իմաստով...

Դուք երբևէ տեսե՞լ եք վայրի ցեղերի թաղման արարողությունները.

չատ կատարյալ է, բայց կատարյալ անիմաստ...

Այսպես ուրեմն՝ նրա կատարելությունը նույնպես անիմաստ էր:

ԿԻՆ – Դուք իմ հարցին չպատասխանեցիք:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչու էի ես նրան ատո՞ւմ:

ԿԻՆ – Այո:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, ես կասեմ: Այո, ես ատում էի նրան: Ատում էի նույնքան, որքան և Դուք, գուցե՝ ավելի: Միայն ոչ այն պատճառով, որ Դուք եք

կարծում... Խոսքն ուրիշ բանի մասին է:

ԿԻՆ – Ինչի՞ մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպե՞ս բացատրեն: Ասենք, թե նա ինչ-որ բան գիտեր, ինչ-որ բան կարող էր, ինչ ուրիշները չէին կարող: Նա մարդկանց ասելիք ուներ... և նրան լսում էին: Բայց դա՛ չէր կարևորը:

ԿԻՆ – Ո՛չ, դա՛ էր կարևորը:

ՏՂԱՄԱՐԴ – Լա՛վ, ինչպես կամենաք:

ԿԻՆ – Պարզապես նա Ձեզնից տաղանդավոր էր:

ՏՂԱՄԱՐԴ – Միայն, խնդրում եմ, պետք չէ ինձնից Սալյերի սարքել:

ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ ոչ:

ՏՂԱՄԱՐԴ – Թեկուզ այն պատճառով, որ Սալյերին գործի մարդ էր...

ԿԻՆ – Ինչպես ես...

ՏՂԱՄԱՐԴ – Այո՛: Եվ հետո, ես նկարիչ չեմ: Ես չեի կարող նախանձել նրան... մասնագիտորեն: Անկեղծորեն ասած, այդ թշվառներին ընդհանրապես հնարավոր չէ նախանձել: Դուք նրան ճանաչում էիք և կհասկանաք ինձ: Նկարչին կարելի է կարեկցել, սիրել, ատել, բայց... նախանձե՞լ... Ինչի՞ն: Տանտալային տառապանքների՞ն, թե՛ սիզիֆյան աշխատանքին: Ներեցե՛ք այս բարձր ոճիս համար:

ԿԻՆ – ...Նվիրվածությամբ իր գործին:

ՏՂԱՄԱՐԴ – Անհեթեթություն: Դուք հո չե՞ք նախանձում շներին այն բանի համար, որ նրանք ողջ կյանքի ընթացքում հավատարիմ են իրենց տերերին:

ԿԻՆ – *(Արհամարհանքով)* Դուք անկարող եք նրան հասկանալ: Դա Ձեզ տրված չէ: Եվ հետո... դա սիզիֆյան աշխատանք չէ... Ես հաստատ գիտեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Սիզիֆյան է, սիզիֆյան չէ... Համենայնդեպս նույնպես անօգուտ է: Նրանք միայն իրենց նկարներում են ձևափոխում աշխարհը: Իսկ կյանքը այլ օրենքների է ենթարկվում: Անխախտ օրենքների՝ անկախ այդ փոթի ներկարարների ցանկություններից:

ԿԻՆ – Ո՛չ:

ՏՂԱՄԱՐԴ – Վերջ տվեք: Չէ՞ որ Դուք էլ ոչինչ չստացաք... նրանից, նրա աշխատանքներից... Թեպետ, դրա համար կային բոլոր պայմանները: Իդեալական պայմանները: Ավելին՝ Դուք դարձաք...

ԿԻՆ – Մարդասպան...

ՏՂԱՄԱՐԴ – Այո՛, եթե կուզեք:

ԿԻՆ – Ամեն ինչ ճիշտ է:

ՏՂԱՄԱՐԴ – Ահա, տեսնո՞ւմ եք:

ԿԻՆ – Ես ուրիշ բան նկատի ունեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես՝ նույնպես:

Ավելի պարզ նայեք աշխարհին, տիկին...

Եվ նայեք Ձեր աչքերով... Գիտե՞ք, ինչու:

Որովհետև այդպես ավելի մոտ է օրիգինալին:

Կյանքն արժանի է դրան:

Ավելի ճիշտ՝ այն ավելիին արժանի չէ:

ԿԻՆ – Դուք Ձեր ապաշնորհության արդարացո՞ւմն եք փնտրում:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ: Եկեք սթափ դատենք՝ մի կողմ դնելով հուզականությունը:

Այժմ, երբ մենք, այսպես ասած, ծանոթացանք, կարող ենք դա մեզ թույլ տալ:

Նստեք: *(Նստում են):*

Ուրեմն այսպես, ենթադրենք, նա ինձնից, մյուսներից, բոլորից

տաղանդավոր էր: Նա տեսնում էր հեռուն, գիտեր ավելին:

Հետո՞ ինչ:

Տառապանքից բացի, ի՞նչ է նա տվել մարդկանց:

Նայեք թեկուզ ինքների Ձեզ...

ԿԻՆ – Դա մի կողմ թողնենք:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ, ինչու: Չէ՞ որ, հոգու խորքում Դուք արդարացնում եք Ձեզ, ինձ... Իսկ մնացածը՝ ավելորդ նրբանկատություն է:

Մենք դարերով հորինում ենք բարոյականության չափանիշներ,

գովաբանում դրանք, ներշնչում մեր երեխաներին, իսկ դրանք փուլ են

զալիս առաջին իսկ լուրջ փորձության դեպքում:

Իսկ գիտե՞ք ինչու: Որովհետև այդ ամենը շինծու է և ընդհանուր ոչինչ

չունի մարդու էության հետ, նրա բնական «ԵՍ»-ի հետ:

Բացե՛ք Ձեր աչքերը:

Բավական է խաբվել խաղալիքներով: Մարդկությունը վաղուց անցել է

այդ տարիքը:

Օձի թույնը շատ հիվանդություններ է բուժում:

Բայց մի՞թե օձերը դադարեցին լինել գարշելի սողուններ:
 Մի՞թե նրանց խայթոցներից պակասեցին մահացու դեպքերը:
 Ուրեմն եկեք իրերն անվանենք իրենց անուններով:
 Նկարիչը, եթե նա իսկապե՛ս տաղանդավոր է, օձի պես վտանգավոր է, իսկ
 նրանից օգուտը՝ չնչին է և աննշան:
 Այդ պատճառով հասարակությունը՝ գիտակցաբար կամ
 անգիտակցաբար, պայքարում է դրա դեմ:
 Եթե կան օձեր, կան և մանգուստներ:
 Եթե կան նկարիչներ, ուրեմն պետք է լինենք և մենք....

ԿԻՆ – Վերջացրե՛ք:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպես կկամենաք:

Դադար:

ԿԻՆ – Դուք գնացիք արվեստանոց, որպեսզի սպանե՞ք նրան:

Դադար:

ԿԻՆ – Ես անմիջապես նկատեցի, որ Դուք հետևում եք ինձ:
 Բայց կարծեցի, թե Դուք նրանցից եք... Դե, գիտեք, կան այդպիսի
 տղամարդիկ...

ՏՂԱՄԱՐԴ – Դուք չեք սխալվել...

ԿԻՆ – Ոչ, ես սխալվել եմ....
 Ասացեք, իսկ այսօր իսկապե՞ս Ձեր ծննդյան օրն է:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Եվ իսկապե՞ս Ձեր 33 տարին է լրացել:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Իմիջիայլոց, 33 տարեկանում...

ՏՂԱՄԱՐԴ – ...Գիտեմ... Մոցարտը թունավորեց Սալերիին...
*(Այս և հաջորդ ռեպլիկները նա արտասանում է համարյա
 մեխանիկորեն):*

ԿԻՆ – Գուցե հակառա՞կը:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ, ես չսխալվեցի:
 33 տարեկան հասակում Մոցարտը թունավորեց Սալերիի կյանքը:
 Նապոլեոնը հրաժարվեց գահից, իսկ Ալեքսանդր Մակեդոնացին
 հասցրեց դառնալ աշխարհակալ, ունեցավ 360 կին և խմեց
 Արիստոտելի ձեռքով պատրաստված թույնը:

ԿԻՆ – Ինձ թվում է՝ Դուք խառնում եք տարեթվերը...

ՏՂԱՄԱՐԴ – Կարևոր չէ:

33... 33 տարեկանում Զիսուս Քրիստոսը խաչվեց հինգ անգամ...

ԿԻՆ – Զինգ անգամ:

ՏՂԱՄԱՐԴ – Առաջին անգամ, երբ նրան չհավատաց Զերովդեսը:

Երկրորդ անգամ, երբ նրան չհավատաց Թադեոսը:

Երրորդ անգամ, երբ նրան չհավատաց Զուդան:

Չորրորդ անգամ, երբ նրան չհավատաց Պիղատոսը...

ԿԻՆ – Իսկ հինգերորդ անգամ:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ հինգերորդ անգամ՝ երբ նա չհավատաց ինքն իրեն:

ԿԻՆ – Նրան հենց հավատի համար գամեցին խաչին:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ... Նա այդքան միամիտ չէր, որ հավատար...

Շարունակներ հավատալ...

33 տարեկանում ինչ-որ բանի հավատալ...

Ո՛չ, ո՛չ, նա այդպես անհուսալիորեն տգետ չէր, ինչպիսին փորձում են մեզ մատուցել...

Պարզապես այդպես նա ավելի հեշտ է յուրացվում

հասարակության կողմից՝ հոգուտ գործի: Ընդհանուր գործի:

Դե, եղել է Աստծո Որդին, տառապել է, հույս է տածել և այլն, և այլն:

Եղեք այնպիսին, ինչպիսին նա՛ էր, եթե կարող եք:

Ո՛չ, մենք չենք կարող: Եվ գիտե՞ք՝ ինչու:

Որովհետև՝ չենք ուզում:

Դուք երբևէ փորձե՞լ եք քացախ խմել: Ձզվելի է, չէ՞:

Ուրեմն՝ լինել մեսի՛ա, ոչ պակաս հաճելի միսիա է:

ԿԻՆ – Դուք շատ եք անարգում Աստծուն:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ ավելին, քան ինքը՝ Քրիստոսը, կամ Մովսեսը:

ԿԻՆ – Ինչպե՞ս հասկանալ Ձեզ:

ՏՂԱՄԱՐԴ – Շատ պարզ: Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ:

Եվ վարվում եմ այնպես, ինչպես ճիշտ եմ համարում:

Եվ ամենակարևորը՝ ես հեքիաթներ չեմ պատմում Սինայ լեռան

մասին և իմ ժողովրդին մոլորության մեջ չեմ զգում:

ԿԻՆ – Աստվածը Ձեզ չի՞ բավարարում:

ՏՂԱՄԱՐԴ – Ինձ չեն բավարարում միջնորդները:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Աստված, եթե կա՝ յուրաքանչյուրիս մեջ է:

Բանականության ձգտում՝ ահա Աստված: Նա մեզանում է, կամ հաղորդակցվում է մեզ հետ անմիջականորեն, անգիտակցաբար, ...աստվածայնորեն:

Իսկ մարգարեները, խունկն ու մոմը խաղալիքներ են կարճամիտների համար:

ԿԻՆ – Ձեր մեջ ինչ-որ բան կա Քրիստոսից, միայն թե՛ հակառակ կողմից:

Դուք կրում եք ո՛չ թե հավատ ու հույս, այլ՝ հուսախաբություն:
Ես խղճում եմ Ձեզ:

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալ եմ: Դուք իմ մասին շատ բարձր կարծիքի եք:

Սակայն, պետք է խոստովանեմ, որ Երկրի վրա իմ դերն անհամեմատ ավելի համեստ է... թերևս՝ նաև դժբախտ:

ԿԻՆ – Դժբա՞խտ:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Ինձ թվում է՝ Դուք չափազանցում եք:

ՏՂԱՄԱՐԴ – Չնարավոր է: Բայց ինչո՞ւ եք կարծում, որ Քրիստոսը՝ միայն նա է բոլորից շատ տառապել:

ԿԻՆ – Իսկ ո՞վ... Չլինի՞ Դուք...

ՏՂԱՄԱՐԴ – Պարտադիր չէ՛...

ԿԻՆ – Այո, որքան հիշում եմ, քիչ առաջ Դուք ինքների ուրացաք Քրիստոսին:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ընդամենը ասացի՝ քացախ չեմ սիրում:

ԿԻՆ – Ի՞նչ է, ստամոքսն է ցավում:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ՝ հոգիս:

ԿԻՆ – Դե դա վտանգավոր չէ:

ՏՂԱՄԱՐԴ – Դուք այդպե՞ս եք կարծում:

ԿԻՆ – Չամենայնդեպս Ձեզ համար վտանգավոր չէ...

ՏՂԱՄԱՐԴ – Կրկին սխալվեցիք: Ես ոչ պակաս խոցելի եմ, քան Աստծո որդին...
Ի՞նչ եք այդպես նայում:

ԿԻՆ – Ես արյուն եմ փնտրում Ձեր ափերին և կողերի տակ...

Սակայն, երևի, պարտադիր էլ չէ: Չէ՞ որ հնարավոր են Քրիստոսի կերպափոխությունները՝ առանց խաչի, մեխերի... Այսպես ասած՝ ավելի ժամանակակից տարբերակ: Այդպես չէ՞...

ՏՂԱՄԱՐԴ – Հնարավոր է...

ԿԻՆ – Դուք, ինչ է, լր՞ուրջ եք ասում:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչու՞ ոչ:

ԿԻՆ – Լսեք, Քրիստոսը երազում էր փրկել մարդկանց, թեթևացնել նրանց տառապանքները... Իսկ Դուք... Դուք ոչնչություն էք...

ՏՂԱՄԱՐԴ – Դրանք խոսքեր են...

Հիշե՛ք, ինչպես էին անվանում Քրիստոսին կյանքի օրոք...

Դա՛ չէ կարևորը: Եվ նույնիսկ այն, թե ինչ էր նա քարոզում, ինչպես էր քարոզում և հանուն ինչի էր քարոզում:

Կարևորն այն է, թե հետնորդներն ինչպես կներկայացնեն իրողությունը:

ԿԻՆ – Դե, այսպես թե այնպես՝ Դուք պատմության մեջ մտնելու քիչ շանսեր ունեք:

ՏՂԱՄԱՐԴ – Ես իմ մասին չեմ խոսում:

ԿԻՆ – Դուք ինձ հանգստացրեցիք...

ՏՂԱՄԱՐԴ – Պարզապես Ձեզ խորհրդանիշներ են պետք՝ պարզունակ, հեշտ յուրացվող... Եվ Ձեր նկարիչը՝ նույնպես խորհրդանիշ է:

ԿԻՆ – Համենայնդեպս նա հազար անգամ մոտ է Քրիստոսին, քան՝ Դուք:

ՏՂԱՄԱՐԴ – Իր մոլորության մեջ՝ այո:

ԿԻՆ – Ավելի լավ է ընկնել մոլորության մեջ՝ փորձելով գործել բարություն, քան ավիրել ամեն ինչ...

Նայեք ինքներդ Ձեզ. Դուք 33 տարեկան եք...

Ի՞նչ եք արել այս տարիքում: Ոչի՞նչ:

Միայն ցեխ եք նետել ուրիշների վրա:

Դուք հպարտանում եք, որ մանգուստ եք... Ո՛չ, Դուք մանգուստ չե՛ք:

Ավելի շուտ՝ վիշապ եք: Սողուն եք ինչպես օձ, սնվում եք հող ու մոխրով,

ինչպես այդ սողկանքները, բայց թույն չունեք... Հասկանո՞ւմ եք՝ թույն չունե՛ք...

Եվ այդ պատճառով ոչ մի օգուտ չեք բերում...

Դուք խեղդում եք՝ դանդաղ և անողորմաբար...

Ձեր նմանները խաչեցին Քրիստոսին:

Հիմա էլ ոչնչացնում եք այն ամենը, ինչ մնացել է...

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ թե ես, այլ՝ մենք:

Ես փաթաթվում եմ որպես վիշապ, իսկ Դուք կծում եք որպես զեռուն...
 Ձեր կարծիքով, մեզնից ո՞ւմ վարմունքն է ավելի ազնվաբարո, Ձե՞րը, թե՞
 իմը:
 Չգիտե՞ք... Դե, այդ դեպքում Դուք խորհեք, իսկ ես գնամ...
 Չեմ պատրաստվում չարաշահել Ձեր համբերությունը:

ԿԻՆ – Դուք շատ բարի եք:

ՏՂԱՄԱՐԴ – Այո, այդպես էլ կա: Թեպետ Դուք, իհարկե, այլ կերպ եք մտածում:

ԿԻՆ – Այո, ես այլ կերպ եմ մտածում: Ես մտածում եմ, որ Դուք
 պատրաստվում եք հեռանալ, որովհետև այստեղ կարող եմ մտնել...
 Որովհետև Դուք վախկոտ եք:

ՏՂԱՄԱՐԴ – Ես գնամ:

ԿԻՆ – Գնացե՛ք:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ցանկություն չունեի խռովել Ձեր հոգին...
 Հավատացե՛ք...
 Խոստանում եմ՝ այլևս Դուք իմ մասին երբեք ոչինչ չեք լսի...

ԿԻՆ – Երբե՞ք:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչը՝ երբեք...

ԿԻՆ – Երբեք չե՞մ լսի:

ՏՂԱՄԱՐԴ – Դա կախված է Ձեզնից... Եթե...

ԿԻՆ – Ես ի՞նչ կապ ունեմ: Չէ՞ որ Ձեր նպատակը նկարիչներն են:
 Ուրեմն Ձեր մասին չենք լսի՝ մինչև հաջորդ նկարիչը:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչ է, դու որևէ մեկին արդեն նկատի՞ ունես:

ԿԻՆ – Այդ երբվանի՞ց անցանք «դու»-ի:

ՏՂԱՄԱՐԴ – *(Դադար)* Ներեցե՛ք: Ուրեմն որևէ մեկին արդեն նկատի՞ ունեք:

ԿԻՆ – Ո՛չ, դեմ՝ ոչ...

ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն հաջողություն Ձեզ, կոլեգա:
(Պատրաստվում է հեռանալ):

ԿԻՆ – Շնորհակալ եմ...

Պարզապես... Դուք պատմում էիք մանգոլստների մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Սողունների...

ԿԻՆ – Այո: Եվ ես մտածեցի, որ մարդ-արարածը...

ՏՂԱՄԱՐԴ – Մարդ-արարածը...

Դուք երբևէ չե՞ք մտածել, որ ոչ թե Աստծո պատկերն ու նմանությունն ունեցող մարդ-արարածն է «բնության պսակը», այլ՝ ամենապարզունակ միաբջիջը՝ ամեռբան:

ԿԻՆ – Դուք անհեթեթություններ եք դուրս տալիս:

ՏՂԱՄԱՐԴ – Չի բացառվում: Եվ այնուամենայնիվ...

Համաձայնվե՛ք, մեր և այդ պարզունակ կենդանիների գոյության իմաստը նույնն են՝ ուտել և բազմանալ, լափել ու բազմանալ: Միայն թե ամեռբան դա անում է պարզ, բնական ճանապարհով, իսկ մարդը՝ շինծու, անպետք արգելքներ ու տառապանքներ անցնելուց հետո միայն:

ԿԻՆ – Եթե հավատում եք Ձեր ասածներին, ուրեմն վտանգավոր մարդ եք:

ՏՂԱՄԱՐԴ – Իհարկե, ես չեմ հավատում իմ ասածներին:

Եվ ես վտանգավոր մարդ չեմ:

Ես պարզապես՝ մարդ եմ: Թեպետ դա արդեն վտանգավոր է:

ԿԻՆ – Դուք վախենո՞ւմ էիք նրանից:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ, ես վստահ էի, որ բանականությունը կհաղթի:

Իսկ բանականությունն իմ կողմնակիցն է: Մե՛ր կողմնակիցը:

Եվ հետո՝ մեր նմանները մեծամասնություն են կազմում:

Եվ այդ պատճառով մարդկությունը զարգացել է ըստ մե՛ր օրենքների:

Իսկ այդ նկարիչներն ընդամենը համեմունք են, որպեսզի սնունդն ավելի լավ յուրացվի... հոգևոր սնունդը...

ԿԻՆ – Այդ ինչքա՛ն եք ատում նրան:

ՏՂԱՄԱՐԴ – Մենք երկուսս էլ ատում ենք նրան:

ԿԻՆ – Ո՛չ, ես... ես սիրո՞ւմ եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Ինչ ասացի՞ք...

ԿԻՆ – Ես սիրո՞ւմ եմ նրան:

ՏՂԱՄԱՐԴ – Այն ամենից հետո, ինչ Դուք արեցի՞ք...

ԿԻՆ – Այո...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ, դա հնարավոր չէ... Դուք զառանցում եք...
Դուք պարզապես խելագարվել եք...

ԿԻՆ – Ես սիրում եմ նրան...

ՏՂԱՄԱՐԴ – Լռե՛ք...

ԿԻՆ – Ես սիրում եմ նրան...

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ... ո՛չ, ես չեմ սխալվել... Ես չեի կարող սխալվել...

ԿԻՆ – Լսո՛ւմ եք, ես սիրո՛ւմ եմ նրան...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց մենք տանուլ տվեցինք... Երկուսս էլ տանուլ տվեցինք:
Եվ գիտեք՝ ինչո՞ւ...
Մենք այդպես էլ չկարողացանք ինչպես հարկն է սպանել նրան...

ԿԻՆ – Աստված իմ, որքան եմ ես սիրում...

*Վերջին անգամ հնչում է երաժշտությունը:
Բենոյ անցնում է գիղը՝ էքսկուրսանտների խմբի հետ:*

ՎԵՐՋ